

ԽՆԴԻՐՆԵՐ


Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ

- հաշվիչ օգտագործել չի թույլատրվում.
- յուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը.
- չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում.
- մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր.
- մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ.
- գլխավոր պահանջը մրցույթի մասնակիցներից և կազմակերպիչներից հանձնարարությունը ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

3 միավոր գնահատվող խնդիրներ

1. Կատուն և մուկը գտնվում են նկարում պատկերված լաբիրինթոսում: Կատուն կարող է հասնել կաթին, իսկ մուկը՝ պանրի կտորին: Սակայն կատուն չի կարող հանդիպել մկանը: Ի՞նչ տեսք ունի նկարի փակված մասը:




- (A) (B) (C) (D) (E)

2. 40 րոպե տևողությամբ դասը սկսվեց 11:50: Դասի ճիշտ կեսին դասարան ներս թռավ մի ծիտիկ: Ե՞րբ դա տեղի ունեցավ:

(A) 11:30 (B) 12:00 (C) 12:10 (D) 12:20 (E) 12:30

3. Հնդկացի առաջնորդը՝ Մեծ Արջը, ունի երեք փետուր, կացին, նետեր և կոշիկներ: Նրա որդին՝ Սպիտակ Կապիկը, ունի երկու փետուր, նետեր, կրծքին նկարված երկու գիծ և չունի կացին: Նկարներից որո՞ւմ են Մեծ Արջը և Սպիտակ Կապիկը պատկերված միասին:




- (A) (B) (C) (D) (E)

4. Ռեստորանում ապուրը կարելի է գնել 4 եվրոյով, փլավը՝ 9 եվրոյով, իսկ թխվածքը՝ 5 եվրոյով: Կա նաև առաջարկ՝ գնել բոլորը միասին, երբ ապուրի, փլավի և թխվածքի համար միասին պետք է վճարել 15 եվրո: Որքա՞ն գումար կարելի է խնայել, եթե օգտվենք առաջարկից ուստեստները առանձին պատվիրելու փոխարեն:

(A) 3 եվրո (B) 4 եվրո (C) 5 եվրո (D) 6 եվրո (E) 7 եվրո

5. Վեց մետաղադրամները շարված են եռանկյունու տեսքով: Դուք պետք է տեղաշարժեք մի քանի մետաղադրամ և տեղադրեք դրանք այնպես, որ ստացվի շրջան (տե՛ս նկարը): Նվազագույնը քանի՞ դրամ պետք է տեղաշարժել:



- (A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5
6. Չորս ընկեր կերան պաղպաղակ: Կարենը կերավ ավելի շատ, քան Բարկենը, Արթուրը կերավ ավելի շատ, քան Դավիթը, բայց՝ Բարկենից քիչ: Պատասխաններից որո՞ւմ են նշված տղաները այս հերթականությամբ՝ ամենաշատ ուտողից մինչև ամենաքիչ ուտողը:
- (A) Կարեն, Արթուր, Դավիթ, Բարկեն (D) Արթուր, Դավիթ, Կարեն, Բարկեն
 (B) Դավիթ, Կարեն, Բարկեն, Արթուր (E) Արթուր, Կարեն, Դավիթ, Բարկեն
 (C) Կարեն, Բարկեն, Արթուր, Դավիթ

7. Խճանկարներից որո՞րը հնարավոր չէ ստանալ, եթե սենյակի հատակը ուզում ենք պատել միայն տեսքի սալիկներով:

(A) (B) (C) (D) (E)


8. 40-տոնանի Բիլն ունի քառասուն ոտք: Երեկ նա խանութից գնեց ու հագավ 8 գույզ կոշիկ: Սակայն նրա ոտքերից 10-ը մնացին անկոշիկ: Մինչև խանութ գնալը նրա ոտքերից քանի՞ սն էին կոշիկով:

(A) 17 (B) 20 (C) 14 (D) 22 (E) 28

4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Մարիամը նկարում նշված գծերով 4 անգամ ծալեց և բացեց թուղթը: Թուղթը ծալելիս քանի՞ անգամ են համընկնում նկարում պատկերված կենդուրուները:

(A) 0 (B) 1 (C) 2 (D) 4 (E) անսահման շատ



10. Միքայելը և Անահիտը ապրում են բարձրահարկ շենքում: Անահիտն ապրում է Միքայելից 12 հարկ բարձր: Մի օր Միքայելը աստիճաններով բարձրացավ Անահիտենց տուն: 8-րդ հարկ հասնելով՝ նա անցավ ճանապարհի կեսը: Ո՞ր հարկում է ապրում Անահիտը:

(A) 12 (B) 14 (C) 16 (D) 20 (E) 24

11. Մեծ խորանարդը կառուցված է 64 հավասար փոքր սպիտակ խորանարդներից: Մեծ խորանարդի 5 նիստը ներկված է մոխրագույն: Քանի՞ փոքր խորանարդի երեք նիստերն են մոխրագույն:

(A) 4 (B) 8 (C) 16 (D) 20 (E) 24

